Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ

PEDAGOGY AND SOCIAL SCIENCES

2 (65)

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2023

ՀՏԴ 37.012
DOI: 10.51307/182931072015233260-23.65-71

ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

ԱԳՆԵՍԱ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Համառոտագիր

Այս հոդվածում ներկայացված են անգլերենի դասերին ունկնդրման ուսուցման առանձնահատկությունները, ունկնդրման հմտությունների ու կարողությունների զարգացման մեխանիզմները: Դիտարկվում են ունկնդրման գործընթացում հանդիպող դժվարությունները, ինչպես նաև առաջարկվում են այդ դժվարությունները հաղթահարելու միջոցները:

Հիմնաբառեր՝ ունկնդրում, ունկնդրման ուսուցում, ունկնդրման դժվարություններ, խոսքային գործունեություն, անգլերեն, հմտություններ և կարողություններ, խոսքի ընկալման մեխանիզմներ:

Ներածություն

Ժամանակակից աշխարհում օտար լեզու սովորելու մոտիվացիան մեծանում է: Հաշվի առնելով անգլերենի՝ որպես միջազգային հաղորդակցման լեզվի դերն ու կարևորությունը, ուստի և այդ լեզվին տիրապետելու հասարակական հարաճուն պահանջը՝ վերջին տարիներին անգլերենի ուսուցումը մեծ հետաքրքրություն է առաջացրել: Այսօր անգլերենի իմացությունն անհրաժեշտ է արժանապատիվ կրթություն ստանալու, բարձր վարձատրվող մասնագիտություն ձեռք բերելու, արտերկրում սովորելու, դրամաշնորհ շահելու, գործնական կապերն ընդլայնելու և միջազգային մակարդակով հաղորդակցվելու համար :

Այսօր անգլերենի դասավանդման մեթոդիկայում զգալի տեղ է զբաղեցնում ունկնդրումը: Այն բանավոր խոսքի ուսուցման կարևոր հմտություններից է և ենթադրում է խոսքային գործունեության բոլոր տեսակների տիրապետում՝ խոսել, կարդալ, լսել և գրել:

Ունկնդրողական կարողությունների բավական բարդության պատճառով առանձնահատուկ արդիական է խոսքային գործունեության այս տեսակի ուսուցման խնդիրը, որը մինչ օրս մնում է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամենավիճահարույց խնդիրներից մեկը և հատուկ ուշադրության առարկա է մեթոդաբանների և հոգեբանների կողմից, որոնք ակտիվորեն փնտրում են ուսուցման որակի և արդյունավետության բարձրացման ուղիներ և միջոցներ:

Աշխատանքի գիտական նորույթը այն է, որ իրականացվել է ունկնդրման ուսուցման տեսական և էմպիրիկ ուսումնասիրություն,

մեկնաբանվել են ունկնդրման կարողությունների աստիճանական զարգացման խնդիրները և առաջարկվել են վարժություններ լսողական հմտությունների և կարողությունների զարգացման նպատակով:

Բանավոր խոսքի տիրապետումը սկսվում է լսելուց: Տեղեկությունը լսողությամբ ընկալելով՝ սովորողը տիրապետում է լեզվի հնչյունական կողմին և նրա հնչերանգային առանձնահատկությանը: Խոսքային գործունեության այս տեսակի տիրապետումն օգնում է ունկնդրին լսել և հասկանալ խոսողին, քաղել իր համար անհրաժեշտ տեղեկատվությունը, արձագանքել զրուցակցի խոսքին, ինչպես նաև իր հերթին արտաբերել անհրաժեշտ տեղեկատվությունը: Ունկնդրման տիրապետումն ապահովում է հաղորդակցության հաջողությունը, այն անգլերեն խոսելու և անգլերեն խոսքը հասկանալու ունակության մեջ է: Լսելը, բացի իր հիմնական նպատակից, զարգացնում է հիշողությունը, մտածողությունը, երևակայությունը և ընկալումը, այսինքն՝ նպաստում է անհատի համակողմանի զարգացմանը (Королева, Кальщикова, 2015, с. 129-134):

Ունկնդրման հմտություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ է նախ տիրապետել լեզվի հնչյունական կառուցվածքին, հնչյունաբանական առանձնահատկություններին, հնչերանգին. ռիթմին, առոգանությանը: Ունկնդրման միջոցով է յուրացվում նաև լեզվի բառապաշարը և նրա քերականական կառուցվածքը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում ունկնդրման ուսուցմանը, քանի որ օտար լեզվին տիրապետելը ոչ միայն սեփական մտքերը, մտադրությունները, ցանկություններն արտահայտելն է, այլ նաև անմիջական շփման ընթացքում, լինի դա օդանավակայանում, կայարանում, հեռուստատեսությամբ թե այլուր, այլև հաղորդագրություններ լսելիս կենդանի խոսքը հասկանալ կարողանալը: Ունկնդրումը հանդես է գալիս հաղորդակցման տարբեր իրավիճակներում.

- բազմապիսի հայտարարություններում,
- ռադիո և հեռուստատեսային նորություններում,
- տարբեր հրահանգներում և հանձնարարություններում,
- դասախոսություններում,
- զրուցակիցների պատմություններում,
- հեռախոսային հաղորդակցություններում:

Ունկնդրումը միաժամանակ և՛ ուսուցման նպատակ է, և՛ ուսուցման միջոց: Որպես ուսուցման միջոց՝ խոսքային գործունեության այս տեսակը առկա է յուրաքանչյուր դասի ժամանակ. դա ուսուցչի խոսքն է, սովորողների պատասխանները, ձայնագրություններ լսելը, քննարկումները, թելադրությունը, իսկ լսողական հմտությունների և կարողությունների ձևավորումն ու զարգացումը է ուսուցման նպատակն է:

Լսելը հաղորդակցության հիմքն է, բանավոր հաղորդակցության յուրացումը սկսվում է լսելուց: Տեղեկությունը լսողությամբ ընկալելով՝ սովորողը տիրապետում է լեզվի հնչյունական կազմին, նրա հնչերանգին: Ունկնդրման տիրապետումն օգնում է սովորողին լսել և հասկանալ խոսակցին, քաղել իր համար անհրաժեշտ տեղեկատվությունը, արձագանքել զրուցակցի խոսքին, ինչպես նաև իր հերթին արտահայտել անհրաժեշտ տեղեկատվություն: Ցանկացած լեզվի, և առաջին հերթին մայրենիի յուրացումը սկսվում է լսելուց, լսում ենք հնչյուններ, բառեր, լսողությամբ ընկալում տեղեկատվության ցանկացած հոսք, հետո միայն սովորում ենք վերարտադրել խոսքը, հետագայում ձեռք ենք բերում կարդալու և գրելու հմտություններ: Այսպիսով, լսելը կարևոր և առաջին օղակն է լեզվի ուսուցման գործընթացում:

Ունկնդրման ուսուցումը ենթադրում է հետևյալ նպատակները.

- հասկանալ զրուցակցի հայտարարությունը հաղորդակցության տարբեր իրավիճակներում, ներառյալ անծանոթ լեզվական միջոցները,
- ըմբռնել ուսումնական և բնագիր տեքստերի բովանդակությունը խորությամբ,
- զարգացնել ունկնդրման որոշակի հմտություններ և կարողություններ,
- զարգացնել լսողական հիշողությունը,
- սովորել կարևորել տեղեկատվության հոսքի մեջ հիմնականը,
- մտապահել խոսույթի նյութը:

Ունկնդրման ուսուցման հիմնական գործոնը մոտիվացիան է: Լսողը պետք է լսելու կարիք ունենա: Կարևոր է ընտրել այնպիսի աուդիոտեքստ, որը հետաքրքիր և բովանդակալից լինի սովորողների համար, որը համապատասխանի նրանց տարիքային առանձնահատկություններին, հետաքրքրություններին և խնդիրներին: Ներկայումս հասանելի են մեծ թվով լսողական լրատվամիջոցներ, այդ թվում՝ աուդիոձայնագրություններ, ֆիլմեր, երգեր անգլերենով, աուդիոգրքեր, ռադիոհաղորդումներ, հեռուստաալիքներ: (Goh, 2008, p.188-213):

Լսողական հմտությունը ամենադժվար հմտություններից է, քանի որ այն ստիպում է սովորողին գործել ավելի արագ, կարողանալ մտովի շեղվել կողմնակի հնչյուններից, տարանջատվել սեփական մտքերից ու ապրումներից: Իսկ ամենադժվարը ընտելանալն է ուսուցչի ձայնին, ռիթմին, արտաբերած բառերի ու հնչյունների արագությանը և առոգանությանը:

Ունկնդրման հաջողությունը կախված է.

- Ունկնդրողի հավանական կանխատեսում օգտագործելու կարողությունից

• Մայրենի լեզվում մշակված հմտություններն ու կարողությունները օտար լեզվին փոխանցելու ունակությունից

• Սովորողի անհատական առանձնահատկություններից. հնարամտություն և կշռադատվածություն, արագ արձագանքելու ունակություն, վերադասավորում մի մտային գործողությունից մյուսը, արագ ներգրավվում հաղորդագրության թեմայի մեջ:

Գոյություն ունեն լսողական հմտությունները բարելավելու այնպիսի եղանակներ, ինչպիսիք են.

• Դիտել ֆիլմեր առանց թարգմանության և առանց ենթագրերի,
• Պարբերաբար լսել աուդիոնյութեր,
• Սովորել աուդիոգրքերով,
• Ընդլայնել բառապաշարը,
• Զարգացնել քերականական հմտությունները,
• Կատարելագործել արտասանությունը,
• Ավելի շատ խոսել անգլերեն,
• Սովորել մտածել անգլերենով,
• Հնարավորինս անտեսել անծանոթ բառերը,
• Հարմարվել ժարգոնի առկայությանը,
• Չթարգմանել անգլերենից հայերեն:

Ունկնդրման կարողությունների զարգացման նպատակով առաջարկվում են հետևյալ եղանակները.

• Ընկալել և հասկանալ ունկնդրած տեքստի հիմնական բովանդակությունը:
• Վեր հանել տեքստից անհրաժեշտ տեղեկատվությունը:
• Ամբողջապես ըմբռնել ունկնդրվող բնագրի մանրամասները:
• Տեքստում առանձնացնել հիմնական միտքը:
• Վերհանել անհրաժեշտ տեղեկատվությունը գործնական բնույթի հաղորդագրություններում:
• Անտեսել անծանոթ լեզվական նյութերը, որոնք էական չեն տեքստը հասկանալու համար: (Малетина О.А., 2010, с. 114–119):

Ելնելով առաջադրանքից, առանձնացվում են.

1. Ունկնդրվող տեքստի մանրամասն ըմբռնում **(listening for detailed information)** (լսում են մանրամասն տեղեկություններ ստանալու համար)
2. Ունկնդրվող տեքստի հիմնական բովանդակության ըմբռնում **(skim listening)** (լսում են սահուն ըմբռնման համար)
3. Ունկնդրվող տեքստի տեղեկատվության մասնակի ընտրություն **(listening for partial comprehension)** (լսում են մասնակի ըմբռնման համար) (Соломатина, 2011, с. 130-134):

Լսողությամբ հաղորդագրության ըմբռնումը, միանշանակ, պասիվ գործունեություն չէ: Այն ակտիվ և բարդ գործընթաց է երկրորդ լեզու սովորողի համար: Դժվարությունը այն է, որ սովորողը առնչվում է մի լեզվի հետ, որի ոճը շատ է տարբերվում մայրենի լեզվից, լեզու, որի և՛ ձևաբանական և՛ շարահյուսական համակարգը, ինչպես նաև հնչյունական, արտասանական, բառային կառուցվածքները շատ քիչ ընդհանրություն ունեն մայրենի լեզվի հետ: Լսողը պետք է կարողանա տարբերակել հնչյունները, հասկանալ օտար լեզվի բառապաշարը, ընդօրինակել առոգանությունն ու հնչերանգը և հարմարվել մայրենիից տարբերվող լեզվի ռիթմին: Այնուհետև պետք է պահպանի այն, ինչը հասկացել է, որպեսզի մեկնաբանի տեքստի, հայտարարության անմիջական համատեքստում: Անշուշտ պետք է արձանագրել, որ այս բոլոր գործընթացների համակարգումը լսողի կողմից պահանջվում է բարդ մտավոր գործողություն:

• Ունկնդրման բարդությունը նաև այն է, որ դրանում միաժամանակ ներգրավված են մի քանի հոգեբանական մեխանիզմներ. զգայական ընկալում ու ըմբռնում և վերաիմաստավորում: Միևնույն ժամանակ չի կարելի չխոստովանել, որ գիտականորեն լիովին չեն ուսումնասիրվել ընկալման և ըմբռնման գործընթացները: Դրա մասին է վկայում ընկալման հակասական տեսությունների, ընկալման մակարդակների և ընկալման միավորների տեղաբաշխման տարբեր մոտեցումների առկայությունը (Мосолова, 2015, с. 70-79):

Օտար լեզվով լսողությամբ լեզվական նյութը յուրացնելու գործընթացում սովորողն առնչվում է տարբեր դժվարությունների հետ, որոնք ազդում են օտարալեզու խոսքի ընկալման վրա: Ունկնդրման արդյունավետ ուսուցումն անհնար է դառնում առանց հաշվի առնելու ու գնահատելու այդ դժվարությունները, ուստի անգլերենի դասավանդման գործընթացում հարկավոր է կիրառել բազմատեսակ տեխնոլոգիաներ և վարժություններ՝ լսողական, արտասանական կարողություններ և հմտություններ ձևավորելու, ինչպես նաև համապատասխան միջոցներ ձեռնարկել դժվարությունները հաղթահարելու համար (Richards, 2008, p. 67-85):

Այդ դժվարությունները ծագում են երկու պատճառով. հաղորդագրության մեջ պարունակվող չուսումնասիրված լեզվական նյութի և հաղորդագրության մեջ ուսումնասիրված, բայց դժվար ըմբռնելի լեզվական նյութի պատճառով:

Չուսումնասիրված լեզվական նյութ պարունակող տեքստի դժվարության հաղթահարումը նպաստում է նոր բառերի իմաստը գուշակելու կարողության զարգացմանը, ինչպես նաև տեքստի իմաստն ամբողջությամբ հասկանալուն՝ չնայած անծանոթ տարրերի

առկայությանը: Անծանոթ տարրերն անուշադրության են մատնվում, քանի որ էական դեր չեն խաղում տեքստի ընդհանուր բովանդակությունն ըմբռնելու համար:

Ուսումնասիրված, բայց դժվար ըմբռնելի լեզվական նյութի դժվարությունը կապված է այն բանի հետ, որ նոր բառերի, քերականական երևույթների կամ խոսքային նմուշների հետ ծանոթանալիս, սովորողի ուշադրությունն ամբողջովին հրավիրվում է այդ նյութի վերարտադրման վրա, և սովորողը իր ուսումնասիրած լեզվական նյութը հեշտությամբ չի ճանաչում:

1. Խոսելով ունկնդրման դժվարությունների մասին նպատակահարմար է դիտարկել այս խնդրի ուսումնասիրման վերաբերյալ առկա որոշ աշխատություններ (Chinnery, 2005, p. 10-16, Goh, 2008, p. 188-213, Королева, Кальщикова, 2015, с. 129-134), որոնք հիմք են հանդիսանում այդ դժվարությունները խմբավորելու հետևյալ կերպ.

1) լեզվական նյութի բնույթով պայմանավորված դժվարություններ

2) խոսքի բովանդակությամբ պայմանավորված դժվարություններ

3) շարադրման հետևանքով պայմանավորված դժվարություններ

4) ընկալման պատճառով առաջացած դժվարություններ

Լեզվական նյութի բնույթով պայմանավորված դժվարություններն իրենց հերթին կարելի է բաժանել հնչյունական, բառապաշարային և քերականական դժվարությունների (Sadiku, 2015, p. 29-31):

Հնչյունական դժվարությունները կարող են լինել և՛ ընդհանուր բոլոր օտար լեզուների համար, և՛ հատուկ առանձին լեզուների համար: Աշխարհի յուրաքանչյուր լեզու, ներառյալ անգլերենը, ունի արտասանության հստակ առանձնահատկություններ: Բառերի ճիշտ արտասանությունը դժվարություն է առաջացնում սովորողների մոտ, քանի որ անգլերենի հնչերանգը զգալիորեն տարբերվում է մայրենի լեզվից, որի պատճառով էլ անգլերեն սովորողները հաճախ բախվում են խոսքային և լեզվական առանձնահատկությունների հետ կապված դժվարությունների:

Ընդհանուր դժվարությունը բառի, հնչյունների և նախադասության բառերի միջև հստակ սահմանի բացակայությունն է. օտար լեզուներում այն հնչյունների առկայությունը, որոնք մայրենի լեզվով չկան, օրինակ՝ [æ], [ð], [ŋ], [θ] անգլերենում: Անգլերենին հատկապես բնորոշ է բառերի ուղղագրության և արտասանության անհամապատասխանությունը:

Բառապաշարային դժվարությունները ներառում են առաջին հերթին բոլոր լեզուներում ամբողջական համանունների և հնչյունական համանունների առկայությունը: Հնչողությամբ նման բառերը նույնպես մեծ դժվարություն են առաջացնում, հատկապես հարանունները՝ economic –

economical, հակադիր հասկացություններ արտահայտող բառերը answer - ask, take - put, west - east (պատասխանել - հարցնել, վերցնել - դնել, արևմուտք - արևելք), բառեր, որոնք ունեն նույն համատեղելիությունը կամ պարզապես հայտնվում են մոտակայքում, այլ կերպ ասած. այն ամենը, ինչը կարելի է շփոթել:

Քերականության ոլորտում ամենամեծ դժվարությունը նախադասության շարահյուսական կառուցվածքի անհամապատասխանությունն է՝ մայրենի լեզվի հետ համեմատած: Հայոց լեզվին բնորոշ ստորադասական նախադասությունների (subordinate clauses) փոխարեն անգլերենում տարածված են դերբայական դարձվածները (participial and infinitive phrases.): Դժվարություններ կան լսողությամբ ընկալելու բարդ բայերի դեպքում (compound verbs), ինչպիսիք են to puton, to putaway, to putoff, to putup, to putdown և այլն:

Հոդվածի սահմանափակ շրջանակներում, իհարկե, հնարավոր չէ թվարկել բոլոր լեզվական երևույթները, որոնք դժվարություն են առաջացնում, այնուամենայնիվ, հարկ է նշել դրանցից ամենատիպականները, օրինակ՝ բառապաշարային, քերականական և հնչյունական համանունությունը, բազմիմաստությունը, որոնք լուրջ խոչընդոտ են հաղորդագրության իմաստը հասկանալու համար: For example, a bank-գետի ափ a bank-բանկ

We put a tent on the bank of the river. /Գետի ափին վրան կանգնեցրինք/:
My brother occupies a key position in the bank. /Եղբայրս կարևոր պաշտոն է զբաղեցնում բանկում:/

Օտար լեզվով խոսքը լսելիս շատ այլ խանգարող հանգամանքներ էլ կան. խոսքի բովանդակությունը, խոսողի կողմից օգտագործվող լեզվական միջոցների ընտրությունը, խոսողի տեմպը, նրա խոսքի առանձնահատկությունները, առանձին հնչյունների խիստ կրճատումը կամ բացթողումը, խոսքի անբավարար հստակությունը, խոսողի ձայնի տեմբրը, բարձր կամ ցածր ձայնը և այլն:

Ունկնդրման ուսուցման ընթացքում դժվարություն են ներկայացնում նաև ուսումնասիրվող լեզվի երկրի պատմության, կենցաղի և մշակույթի հետ կապված փաստերի հղումները, այսպես կոչված իրույթները, որոնք կարող են անհայտ լինել սովորողներին: Իրույթները ներառում են աշխարհագրական անուններ, հատուկ անուններ, հաստատությունների և կազմակերպությունների անվանումներ, արվեստի գործեր, պատմական փաստեր, սովորույթներ և ավանդույթներ, ժողովրդական բառեր և արտահայտություններ, և այլն:

Ակնհայտ է, որ ունկնդրման հաջող դասավանդման և ունկնդրման գործընթացում առաջացած դժվարությունները հաղթահարելու համար

անհրաժեշտ է վարժությունների մեթոդական համակարգ, որը հաշվի առնի այդ դժվարությունները և ապահովի դրանց հաղթահարումը:

Լսողությամբ խոսքի իմաստն ընկալելու ուսուցումը ենթադրում է խոսքային և նախապատրաստական վարժություններ, որոնք ուղղված կլինեն ձևավորելու սովորողների ունկնդրողական հմտությունները և հետագայում լսողական տեքստի հետ աշխատելով, զարգացնելու և կատարելագործելու ունկնդրման մեխանիզմները (Елухина, 2009,с. 9-19):

Այսպիսով, նախապատրաստական, խոսքային և լսողական ըմբռնումը զարգացնելուն միտված վարժությունները ուղղված են անգլերենի իմացության խորացմանը և բանավոր խոսքի հմտությունների ու կարողությունների կատարելագործմանը:

- **Խոսքային վարժություններ**

ուսանողները լսում են երկխոսություններ կամ տեքստեր և կատարում են բացթողումներով առաջադրանքներ՝ ծանոթ քերականական և բառապաշարային տարրերով: Նման վարժությունները օգնում են սովորողներին ամրապնդել բառապաշարը, կատարելագործել լսողական մեխանիզմները և ստանալ պահանջվող տեղեկատվությունը:

- **Լսողական վարժություններ**

ընդարձակ առաջադրանքներ կատարելիս անհրաժեշտ է օգտագործել համատեքստ կամ նկարազարդումներ, որպեսզի սովորողները փորձեն պատկերացնել (հասկանալ) այն, ինչ լսում են, և լսելուց հետո միայն կատարել առաջադրանքները: Անհրաժեշտ է, որ սովորողները կենտրոնանան կոնկրետ առաջադրանքների կատարման վրա և չշեղվեն նոր կամ անծանոթ բառեր լսելիս:

- **Նախապատրաստական վարժություններ**

նպատակն է սովորողներին ներգրավել կիրառելու բառային, քերականական և հնչյունական լսողական հմտություններ և հոգեբանական մեխանիզմներ, որոնք հիմք են հանդիսանում հավանական կանխատեսումների, հիշողության ամրապնդման համար: Ունկնդրման ամենաարդյունավետ նախապատրաստական վարժություններ են համարվում.

- **Հավանական կանխատեսման ուսուցման վարժություններ**

լսել ածականների (բայերի) շարքը, անվանել նրանց հետ ավելի հաճախ օգտագործվող գոյականները. անվանել բառի իմաստները, որոնք ձևավորվել են հայտնի տարրերից, for example: thankful, thankless (thank), լսել մի շարք ֆորմուլաներ, անվանել այն իրավիճակները, որոնցում դրանք կարող են օգտագործվել մայրենի կամ օտար լեզվով:

- **Կարճաժամկետ և տրամաբանական հիշողության զարգացման վարժություններ**

լսել մեկուսացված բառերի շարքը, հիշել և վերարտադրել դրանցից նույն թեմային պատկանող բառերը. լսել երկու-երեք կարճ արտահայտություններ, միացնել դրանք նախադասության մեջ:

- **Իրույթներն ու հապավումները ճանաչելու վարժություններ.**

լսել իրույթներ պարունակող արտահայտությունները. թարգմանել դրանք, լսել հապավումներ պարունակող տեքստը, խմբավորել հասկացված անունները, տեղանունները, հաստատությունների անվանումները և այլն):

- **Բառակազմական և համատեքստային գուշակությունների զարգացման վարժություններ**

լսել բայերի շարքը, դրանցից կազմե՛ք գոյականները -er, for վերջածանցով for example listen - listener,
լսել բաղադրյալ և ածանցյալ բառերը, որոնք կազմված են հայտնի բառակազմական ածանցներից, թարգմանել դրանք (կամ բացատրել դրանց գործածությունը նախադասության մեջ).
որոշել միջազգային բառերի նշանակությունը ըստ համատեքստի:

Եզրակացություն

Ունկնդրման ուսուցումը անգլերենի դասավանդման բավականին արդի և կարևոր գործընթաց է: Այն խոսքային գործունեության ռեցեպտիվ տեսակ է, որի օգնությամբ տեղի է ունենում հնչյունային խոսքի իմաստային ընկալում: Ունկնդրումը ներառում է խոսքը լսելու, ընկալելու և հասկանալու գործընթացը: Լսելու հիմքը ակտիվ մտածողական գործընթացն է, որն ուղղված է խոսքի ընկալմանը, ճանաչմանը և ըմբռնմանը: Գոյություն ունեն ունկնդրման չորս հիմնական մեխանիզմներ՝ խոսքի ունկնդրում, հիշողություն, հավանականական կանխատեսում, արտաբերման մեխանիզմ, ինչպես նաև որոշակի հոգեֆիզիոլոգիական մեխանիզմներ ՝ ընկալում, ճանաչում և ըմբռնում:

Ունկնդրման ուսուցման արդյունավետությունը կախված է մի շարք գործոններից՝ սովորողների մոտիվացիայի մակարդակից, ներկայացված աուդիո նյութի որակից, սովորողների առջև դրված նպատակների ու խնդիրների հստակությունից, ունկնդրման նախնական (նախատեքստային) փուլում կատարված աշխատանքից, սովորողների լեզվական ընդհանուր մակարդակից և մի շարք այլ չափանիշներից: Հետևաբար ունկնդրման դասավանդման պատշաճ որակ ապահովելու համար պահանջվում է նոր առաջատար տեխնոլոգիաների, այդ թվում՝ համակարգչային, ինչպես նաև համացանցային ռեսուրսների և հեռավար դասընթացների լիարժեք կիրառում:

Այսպիսով, ունկնդրման հմտությունների արդյունավետ զարգացումը հնարավոր է միայն համակարգված, նպատակային աշխատանքի դեպքում՝ հաշվի առնելով օտարալեզու խոսք լսելու հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները՝ հաշվի առնելով սովորողների

ակտիվությունը, նրանց լեզվական գիտելիքների ընդհանուր մակարդակը, լեզվի ուսուցման հաղորդակցական մոտեցման շրջանակներում նրանց կարիքները, հետաքրքրությունները՝ լեզվական և խոսքի բոլոր հմտությունների ու կարողությունների միաժամանակյա զարգացմանը զուգընթաց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
REFERENCES

1. Chinnery, G. M., Speaking and listening online // Vol. 3: English Teaching Forum. - Washington: English Teaching Forum, 2005. - p. 10-16.
2. Goh, C., Metacognitive instruction for second language listening development: Theory, practice and research implications. *RELC Journal*, 39, p. 188-213. 2008
3. Richards, J. C., Teaching Listening and Speaking. New York, Cambridge University Press, 2008. p. 67-85.
4. Sadiku, L. M., The Importance of Four Skills Reading, Speaking, Writing, Listening in a Lesson Hour. European Journal of Language and Literature Studies. 2015. Vol. 1. №1. p. 29-31.
5. Валиуллина Ф. М., Обучение аудированию студентов неязыковых специальностей[Электронный ресурс] / Ф. М. Валиуллина // Современные проблемы и пути их решения в науке, транспорте, производстве и образовании: Сборник научных трудов SWorld. - Одесса, 2012 - с. 65-68
   Valiullina F. M., Obuchenie audirovaniju studentov nejazykovyh special'nostej[Jelektronnyj resurs] / F. M. Valiullina // Sovremennye problemy i puti ih reshenija v nauke, transporte, proizvodstve i obrazovanii: Sbornik nauchnyh trudov SWorld. - Odessa, 2012 - s. 65-68
6. Елухина Н. В., Речевые упражнения для обучения аудирования // Иностранные языки в школе. - 2009. - №4. - с. 9-19.
   Eluhina N. V. Rechevye uprazhnenija dlja obuchenija audirovanija // Inostrannye jazyki v shkole. - 2009. - №4. - s. 9-19.
7. Королева Е. В., Кальщикова Ю. Р., Использование стратегий при обучении аудированию на уроках английского языка // Актуальные проблемы линг-водидактики и методики организации обучения иностранным языкам. Сборник статей. Чебоксары: Чувашский государственный педагогический университет им. И. Я. Яковлева, 2015, с. 129-134.
   Koroleva E. V., Kal'shhikova Ju. R., Ispol'zovanie strategij pri obuchenii audirovaniju na urokah anglijskogo jazyka // Aktual'nye problemy ling-vodidaktiki i metodiki organizacii obuchenija inostrannym jazykam. Sbornik statej. Cheboksary: Chuvashskij gosudarstvennyj pedagogicheskij universitet im. I.Ja. Jakovleva, 2015, s. 129-134.

8. Малетина О. А., Методические рекомендации по формированию аудитивных навыков в неязыковом вузе // Lingua mobilis. - Челябинск: Рекпол, 2010. - Вып. №4. - с. 114-119.
Maletina O. A., Metodicheskie rekomendacii po formirovaniju auditivnyh navykov v nejazykovom vuze // Lingua mobilis. - Cheljabinsk: Rekpol, 2010. - Vyp. №4. - s. 114-119.
9. Мосолова Е. М., Проблема аудирования на уроках иностранного языка как вида речевой деятельности // Психология и педагогика: Современные и инновации, опыт практического применения. - Липецк: ООО «РаДуши». - 2015. с. 70-79
Mosolova E. M., Problema audirovanija na urokah inostrannogo jazyka kak vida rechevoj dejatel'nosti // Psihologija i pedagogika: Sovremennye i innovacii, opyt prakticheskogo primenenija. - Lipeck: OOO «RaDushi». - 2015. s. 70-79
10. Соломатина А.Г., Развитие умений говорения и аудирования учащихся посредством учебных подкастов. - 2011. с. 130-134
Solomatina A.G., Razvitie umenij govorenija i audirovanija uchashhihsja posredstvom uchebnyh podkastov. - 2011. s. 130-134

АГНЕСА ШАХНАЗАРЯН - МЕХАНИЗМЫ РАЗВИТИЯ НАВЫКОВ И УМЕНИЙ АУДИРОВАНИЯ

Ключевые слова: *аудирование, обучение аудированию, трудности аудирования, речевая деятельность, английский язык, навыки и умения, механизмы восприятия речи.*

В данной статье представлены особенности обучения аудированию на занятиях по английскому языку, механизмы развития навыков и умений аудирования. Рассмотрены трудности, возникающие в процессе аудирования, предложены пути их преодоления.

AGNESA SHAHNAZARYAN - MECHANISMS OF DEVELOPING LISTENING SKILLS AND COMPETENCES

Keywords: *Key words: listening, teaching listening, listening difficulties, speech activity, the English language, skills and abilities, speech perception mechanisms.*

This article presents the peculiarities of teaching listening in the English language classes, the mechanisms developing listening skills and competences. Difficulties encountered in the listening process are considered, and ways to overcome these difficulties are suggested.

Ներկայացվել է՝ 28.09.2023 թ.
Գրախոսվել է՝ 12.10.2023 թ.